



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4258

281.6
R-19

1859

WY-W7

2010

1000



281.6
R-19

25

23

ՔԵՆՔ ՄՐ. ԽՈՍՔ

ԱՅՆ

ՀԵՇՈՏԻՔ ՄԻՇՈՒՆԵԼԵՆ ՀԵՇՈՅ

ՄԿՐ. ԲԵՆՑ

ԸՆԹԱԶ. ԳՐՈՒԱԶ. ՔՐԱՅ

Զ Ա Ր

ՀԱՐԱԴՐԵՍ

Մ. Պ. Տ.



Զ Մ Տ Տ Ո Ւ Տ Ա

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՎԲԱՐՑ ՏԵՏԵԵԱՆ

ՄՆԵԺԴՐԻ ՃԱՐԱՊԵԼԻ ԹՎ. 50

281.6
R-19

1859

llons

2298
40

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Երկրիս վրայ մարդկային սեռին առաջնն պարտքերէն մէնն ալ իւր ներկայ հայրենիքը պատուել, որինաւոր Ազգը սիրել, և անոր սեփական իրաւունքները կերպով մը պաշտպանել ըլլալը՝ ցիկնար մէկը ուրանալ, վասն զի Սատուածային և բնական օրէնքները անդրդուելի պարտք մը դրած են անոր վրայ ։

Ինչպէս որ ԲԱՐԵԼՈՆԻ բաժանմանէ հետէ ամեն աղդ և առ հասարակ բոլոր մարդիկ այս պարտաւորութիւննին ճանչցեր, ընդուներ, և բազում գործերով ալ ցուցուցած են, որով յայտ է թէ՝ ուկիցէ մէկը երր այս պարտաւորութիւննէ կը զլանայ՝ միշեալ երկու կողմէն ալ սահմանուած օրէնքը անարգելով, այն օրէնսդիրներուն դիմացը սոսկալի պատասխանատութեան մը տակ կը մնայ, և ընդհանուր աշխարհի առջև հայրենատեաց և Ազգատեացի վաս անունները կ'ըստանայ :


Նաև ասով յայտնի կ'ըլլայ որ՝ ամեն պատիճանի մարդս զայս պարտքը պիտի ճանչնայ առանց նկատման, և 'ի սրտե պիտի ընդունի առանց խոտորելու, և ժամանակին ըստ պահանջման պարագայից բանիւ և արգեամբ պիտի ցուցընենք իւր կարողութեանը համեմատ

Ահաւասիկ այս ճանաչումն էր որ ազգեց զիս, որ ժամանակին դրժբաղդ անցքերու պատճառաւ հեռ ացած՝ հայրենեացս մօտենամ զայն ի հեռուստ պատուելով, վշտացեալ Ազգս միսիթաբեմիւր գիրկը մըտնելով, և ինչպէս առաջ նոյնպէս հիմա գործով՝ այսինքն անոր անհերքելի իրաւունքները պաշտպանող ազգակցացս գրով օգնեմ :

Եւ ստկայն գիտեմ և կը ճանչնամ որ իմ հայրենիքս և իմ Ազգս ինծի պէս անկար մարդու մը գրչին կարօտութիւն չունի, բայց զայս ընելով միայն ես իմ պարտքս կատարած կ'ըլլամ, և եթէ ասկէ փոքր ինչ բարիք մը ենի՞ զայն կը նուիրեմ իմ սիրելի ազգիս ընդհանրութեանը :

Իսկ ընդհանրական եթէ չի կարենամ այսչափովս իմ նպատակիս հասնիլ, դարձեալ յամենայն ժամ պատրաստ պիտի ըլլամ ընդարձակ դրութիւններով այս պարտաւորութիւնս յարատեւելու, եթէ գըտնեմ այսպիսի զօրաւոր միջոցներ, որոնք կարենան իմ բարի գիտաւութիւններս պրակելու :

Ուստի իմ այսպիսի եռանգս և փոքր մէկ աշխատութիւնս՝ երանին էր թէ ընդհանուր համազգեացս կողմէն առանց մէկ մարդկային նըսկատման՝ ճանչցուեր և 'ի սրտե ընդունուեր, ու այնպէս ունեցած չէ ափագս ընտելի կատարուեր :



ՔԸՆԻ ՄՐ. ԻՕՈՒՔ

ՀԱՒԱՍՏԻՔ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՒԱՑՈՅ ՍԿԶԲԱՆՑ

ՔՍՈՒԱՃ. ԳՐՈՒԱՃ. ՔԴԱՅ

ԽՄԱՍՏՆՈՑ առակը և փիլիսոփաներն մեղ կը խրատեն թէ — Յայտնի անիրաւութեան մը դէմ լուռ կենալը մեծ վատուի մ' է . . . Շշմարտութիւն մը ծածկելը դիւական հնարք մ' է . . .

Երդ՝ այս օգտակար խրատներուն հետեած՝ կը պարտաւորիմ այս օրերս եղած յայտնի մէկ անիրաւութեան մը դէմ խօսելու, և անոր բուն իսկ էութիւնը ծանօթ եղածին չափ երեան հանելու :

Ինչպէս շատերուն յայտնի է, անցեալները Հըսումէացեալ Հայ բրօբականտացի (Վօլէճցի) Տ. Ներսէս քահանայի հեղինակութբը “Հաւասպիչ միանական հաւասպոյ սիլլանց” անուամբ գրութեան մէկ փոքր մասը հրատարակուեցաւ, զոր Ամափս լրագիրը 343^ր թուոյն մէջ զայն ծանուցած էր՝ իբրև Հայաստանեայց Առաքելական Եշեղեցոյ ուղափառութիւնը պաշտպանող։

Ուստի այն ատենէն ’ի վեր կը դիոէի թէ յիշեալ քահանան այս հրատարակութիւնը ընելէն

վերջը ի նչ կերպ ընթացքի մը պիտի հետեւէր , կամ թէ ի՞նչ ճամբաներով ինքզինքը պիտի առատէր իր գլխաւորացը բռնութենէ :

Վասն զի ըստ Շրօբականտայի ներկայ անարդ սահմանադրութեանը՝ չէր կրնար ըլլալ որ ինքը պապական քահանայ , և այնպիսի գպրոցի աշակերտ մը՝ նոյն ճամբով և նոյն ընթացքով իւր գիտաւորութիւնը առաջ տանէր .

Եւ դարձեալ անկարելի էր ներկայ վիճակովը զոյն գլուխ հանելու՝ քանի որ տասնը հինգ տարիէ ՚ի վեր Գ . Հասունեանին հետ (մասնաւոր բանի մը համար) զայրացեալ ատելութիւննին չէր մարած :

Ասոր համար Տ . Ներսէսը հարկադրեալ էր՝ կամ իրենցմէ բոլորովին հեռանալու , և կամ հոգեորապէս իւր պատիմը կրելու , ու յետոյ մշակերով գրուածքը յետս կոչելու , և այնպէս այնքան տարիներէ ՚ի վեր կոբսնցուցած Ակեղեցական իշխանութիւններն այս պատճառաւ ամբողջ ընդունելու . . . :

Ինչպէս որ ըրած այս նախատեսութիւններս քիչ ժամանակի մէջ կատարուեցան հետեւեալ կերպերով :

Այսինքն աս գրուածքը երբ Գ . Հասունեանին ձեռքը կանցնի՝ անմիջապէս քանի մը Ակեղեցական ասպուածաբան անձանց ներկայութեամբը ժողովը մը կը կազմէ , և Տ . Ներսէսը երեք անգամ հօն կը հրաւիրէ , որպէս զի անոր վրայօք քացատրութիւններ տայ : Ասկայն Տ . Ներսէս առանց ժողովքին ներկայանալու՝ առաջին եր-

կրորդ՝ հրաւերներուն գոհացուցիչ պատասխան սը շտալուն, երրորդ անգամուն կը բռնադատեն զինքը՝ որ կամ իր գրուածքը յետս կոչէ, և կամ հրապարակաւ պիտի նզովեն զան :

Եսոր վրայ (երկիւղէն) իւր ձեռնադրովը երկու տող գրուած մը կը ներկայացնէ իրենց, (որ Մասիս լրագրոյն 355 թուոյն մէջ յայտարարած էր) որպէս զի անով քիչ մը բարկութիւննին իջնայ : Բայց անով ալ գոհ չոլալով՝ Նոյեմբեր 30 կիրակի օրը բոլոր Հռոմէացեալ Հայ Եկեղեցեաց մէջ նոյն գրութիւնը կոնդակաւ մը կը բանագրեն, որով Տ. Ներսէսը Եկեղեցական պաշտամունքներէ բոլորովին զրկուած, ողանդոկի մը մէջ փակուելու կը պարտաւորի :

Քանի մը օրէն Ա. Պօռէ լատին քահանան մէջ կը մտնէ և բազում յորդորանօք կը համոզէ զջ։ Ներսէսը, որ աս գործած ամենամեծ սիսալմունքը յետս կոչէ ան գաշտմք՝ որով Գ. Հասունեանը իրեն հետ հաշտուի, և նորանոր իւր ունեցած քահանայական պաշտամունքները կատարելու արտօնութիւնը չնորհէ :

Ուրախութեամբ կ'ընդունի Գ. Հասունեանը աս պայմանները՝ տեսնելով Ա. Պօռէին ձեռքով յետս կոչման թուղթը, և անմիջապէս ստացածէն աւելի Հոգեոր իշխանութիւններ կը շնորհէ իրեն, և ան յետս կոչման թուղթը բոլոր Հռոմէական Եկեղեցեաց գուներուն վրայ փակցընել կու տայ . ինչպէս որ օրինակը Դեկտեմբեր 6 Ա. է ճմուայը հաւատիս տաճկերէն լրագրոյն միջոցաւը Հայերէն լեզուաւ հրատարակուած տեսնուեցաւ . . . :

Ուստի աս գործին ներկայ եղելութիւնը այս-
չափ նկարագրելէս ետքը , հիմա անցեալին մէջ
ունեցած վիճակը քննենք :

Ակէ քսան տարի առաջ յիշեալ քահանան
աս գրութեան ձեռք զարկեր էր ան ատենները
որ Կալաթիոյ Յիսուս Փրկիչ Եկեղեցւոյն դըպ-
րոցին վրակեցուն էր (ինչպէս ես ալ նոյն միջո-
ցին ան դպրոցին աշակերտներէն մէկն էի) . Քանի
մը տարի ետքը աւարտելով՝ տպագրուե՛ հրամանը
ստանալու համար Գ. Մարուշեանին ներկայա-
ցուց , (որ ան ժամանակ Հռոմէացեալ Հայոց
գլխաւորն էր) : Այսկայն ինք ծեր և տկար անձ
մը ըլլալով՝ անոր քննութիւնը իւր փոխանոր-
դին յանձնեց՝ որ էր Գ. Հասունեանը : Կ' առ-
նու աս գրուածքը Գ. Հասունեանը , և ժամա-
նակ մը իւր քովը պահելէն ետքը՝ ետ կը դար-
ձունէ անոր տպագրութիւնը արգիլելով :

Նոյն ատեն Տ. Կերսէսը լուսահոգի Տիւզեան
Յոկոբ Չելէպիին օգնութեանը կը դիմէ , որով
լուսահոգին ան գրուածքը պաշտպաներով կը
քաջալերէ զինքը , և միանգամայն զան Վենետ-
կոյ Ախիթարեանց վանքը տպագրել տալու կ' ա-
ռաջարկէ , անոր ծախքը և ամէն պատասխանա-
տուութիւնը իւր վրան առած : Եւ սակայն ան
չեմ գիտեր թէ ի՞նչ պատճառաւ նոյն ատեն
չի կրցաւ աս բանը 'ի գործ դնելու , միայն այս-
չափս կրնամ երևակայել որ՝ ան ժամանակները
Հռոմէացեսւ Հայոց մէջ ցաւալի փոփոխու-
թիւններ վրայ գալով , այսինքն՝ Գ. Հասունեանը
(ընդդէմ ազգային իրաւանց) , ընթացքով մը

Ասիստակութեան պաշտօնը առած , (տես լուսաւորեալ գար Տետրակի , Երես 61) , Ազնուափայլ Յակոբ չէլեպին վախճանած , և աս պատճառներով կերպ կերպ ազգային Երկպառակութիւններ ծագած ըլլալուն կ'երկի թէ չկըցաւ սկսած գործը կատարել :

Նաև նոյն միջոցներն էր որ Գ . Հասունեանը ժողովրդէն ստակ հաւաքելու պաշտօն մը յանձներ էր իրեն , որով յայտնի է թէ ան պաշտօնին զբաղեալ ան ատեն բոլորովին զանց ըստաւանոր հրատարակութիւնը :

Ահա աս պաշտօնին պատճառաւուն էր որ սաստիկ Երկպառակութիւն մը ծագեցաւ Երկուքին մէջ տեղը , վասն զի Գ . Հասունեանը հաւաքուած ստկին Ճիշտ հաշիւը կը պահանջէր , իսկ Տ . Աերսէս “ Ես մեծամեծ ծախքեր ըրած եմ ” ըսելով՝ քովը գտնուած ստակները չէր ուղերեալ դարձնել :

Յետ բազում աղմկաց և խռովութեանց՝ Գ . Հասունեանը զի՞նքը բոլոր Եկեղեցական պաշտամունքներէ արգիլեց . Իսկ Տ . Աերսէս աս արգելմաւնքը բանի տեղ չփրած , Եկեղեցական գգեստը փոխելով՝ սկսաւ առանձին առան մը մէջ պատարագել , որով Երկու կողման ատելութեան ևս աւելի սաստկանալուն պատճառ եղաւ :

Հատ Երկայն կ'ըլլար , թէ որ աս բանիս մէջ հրապարակաւ կատարուած գայթագութիւնները , և ընդդէմ քահանայական սուրբ պաշտօնամանց պախարակելի ընթացքնին մի առ մի հոս յիշատակէինք :

Ո՞ւայն այսքան կրնամ ըսել թէ՝ որ մը Պէյօղ-
լուն փողոցի մը մէջ Գ. Հասունեանին կողմէն
խրկուած քահանային մէկը, (որ հազիւ թէ
սուրբ անմահ պատարագէն նոր էր աւարտած),
Տ. Ներսէս քահանային հանդիպէլով՝ առանց
բարեելու այսպէս կը պոռար “ Ո՞ւ անօրէն ան-
հընազանդ , ի՞նչպէս կը յանդգնիս դու Կախա-
գահին հրամանին դէմ պատարագելու . . . կամ
չի պիտի հատուցանես այս ինչ դու մարը ”

Այս հրապարակաւ եղած պղոի մէկ եղելու-
թենէ յայտնի կիմացուի թէ՝ երկու կողման ա-
տելութեան սասակութիւնը մինչև որ ծայրը
հասեր էր

Արդ քանի մը տարի մէկ մէկու հետ աս կեր-
պով վարուելէն ետքը , Տ. Ներսէս յանկարծ և
երկայն ժամանակ աներեութացաւ , որ լսած-
նուս՝ Լոնտրա , Վիէննա , Փարիզ , Վենետիկ ,
և մինչև Ամերիկա ճամբորգութիւն ըթեր , և
բազում անցք գլւէն անցեր է , ինչպէս կը պատ-
մեն ճանապարհորդակիցք :

Վերջապէս անցեալ տարուան սկիզբները դար-
ձաւ կ. Պօլիս աշխարհականի զգեստով . բայց
նոյնպէս ոչ ինքը Գ. Հասունեանին դնաց և ոչ
Դ. Հասունեանը զինքը ընդունեց , աս պատ-
ճառաւ սկսաւ նիւթապէս չքաւորել , և իր հե-
տը բերած չնչին վաճառքները ծախելով ինքզին-
քը ժամանակ մը կը մատակարարէր

Ահաւամիկ աս անորոշ վիճակին մէջ կերեի
թէ՝ յանկարծ միտքը ինկաւ վերոյիշեալ գրուած-
քը տպագրութեամբ ’ի լոյս հանելու՝ ան դիտ-

մամբ որ ինքզինքը Հայտաստանեայց սուրբ Եկեղեցոյ պաշտպան ցուցընելով (Մխիթարեանց պէս) Հայոց ազդին ծոցէն բաւական գումար մ' ալ ինքը յափշտակէ

Այսկայն աս անգամ անբախտ ժամանակի մը հանդիպեցաւ , որով չիգտաւ ազգիս բովանդակութեանը մէջէն այնպիսի միամիտ պաշտպաններ , չիկրցաւ ստանալ անխնայ նուէր ընողներ , իւր գրուածքը Հասարակութեան մէջէն հազարաւորներով գնողներ չի կրցաւ գտնել : Ուստի ասոնցմավ յայտ է թէ՝ կամոյ և ակամայ ստիպուեցաւ իւր կեղծ միաքը դուրս պոռտկալու , և անով ինչպիսի անձ մը ըլլալը՝ աշխարհի լուսաւորեալ մարդկանց յայտնելու

Երգ՝ աս ստոյդ անցքերը պատմելէս ետքը՝ առ հասարակ կրնանք յայտնի երեակայել թէ՝ Գ. Հասունեանին ոյս ըրած բռնութիւնը աւելի Տ. Աերսէսին վրայ ունեցած սխակալութեանը փոխարէն նախատինք մը տալու մտօք էր , չէ թէ գրուածքին ուղիղ կամ սխալ ըլլալուն համար :

Վասն զի ինչպէս վերը ցուցուցի , Գ. Հասունեանը առաջուընէ գիտեր և տեսեր էր , և կարծեմ քանի մը պատուաւոր անձանցմէ ալ մասնաւոր նամակներ ընդուներ էր . որոնք անոր հրատարակուիլ կը պահանջէին : Իայց թէ ինչ ան ատեն հրաման չի տուաւ , և կամ չուզեց տալ , 1856ին տպուած մեր “ Լուսաւորեալ Դար ” կոչուած Տետրակը սէփեքէն մինչև վերջը ուշադրութեամբ կարդացո՞ղը կրնայ իմանալ :

Վինչե ասու գրածներէս բաւական համեցուեացաւ որ երկու կողման ըօածն ալ մէկ մէկ անձնական նպատակաւ մ' էր, որոնք անշուշտ հասան իրենց նպատակին :

Այսինքն՝ մէկը շահասիրական ոգւով ճամբ այելած էր, և իրօք յայսկոյս չեղաւ նէ՝ 'ի հարկէ յայնկոյս շահեցաւ՝ իւր կռասնցուցած իշխանութիւնները ձեռք բերելով. նոյնպէս միւսը վըրէժինդ իր ըլլուլու մտօք այս սղարագան ձեռք տռած անմիջապէս նզովեց անոր գրուածը իբրհ հերթին պիտի համական, և զինքն ալ հրապարակաւ (Հոգեսրապէս) պատժեց իբրեւ Ներփիկու : (1)

Երդ կրնայ արդեօք մէկը այս մեր ցուցուցած բաններուն անհիմ է, չինծու է, երազ է, կարծիք մ' է ըսելու, երբ կրտեսնէ տասնը հինգ տարուան ոիներիմ ատելեալները յանկարծ մէկ մէկու հետ հաշուած՝ մէկը առջևիսութեամբ ճակտոր կը համբուրէ, իսկ միւսը ձեռքը :

Երդեօք կուսյն բուն պատճառները անհետացան, ոչ այսօն տարուան դատերնին լմընցան, վճռուեցան, ոչ : Երդեօք Տ. Ներսէս Ժողովրդ էն հաւաքած ստակը ամբողջ վճառեց,

(1) Այս տեղադէկ միտք տռէք, ո համազդի եղբարք, 1852ին Կ. Պոլիս (Ակվորնց) տպուած « Վենետիկու սուրբ Զաղարու Միթարիաներ » ըստնած և բոլոր աշխարհի տուններու ան յատաւը էն շարումնադեանը, անոր ընթացքը, գատը, հետեւութիւնները, և անոր հեղինակոցը արձակ համարձակ քաղքին մէջ շընթիւնն, և առանց մէկ փոքր պատժոյ մը արժանացած մեծ պաշտօններու համեմնին, և հիմա աս կրտածքին վրայ եղած դատաստանին, կերպին, և անոր հեղինակին գէմեկած բանավեճուններուն հէր համեմունք և տնոր չորմար դատիւ :

նոյնպէս ոչ . արդ աս ի՞նչ համբոյ ներ են . . . ա՛ ,
մէկը իւր փոփագած երեսուն դահեկանի խոսո-
մաւնքը լսեց և ընդունեց , իսկ միւսին վրիժա-
ռութիւնը կատարուեցաւ՝ անոր երեսը աներե-
ռութարք ապտակներն իջեցնելով

Առկայն դու , ովք քահանայ Աստուծոյ բարձ-
րելոյ , իրաւի քու շինծու Խղաներով մաս մը ա-
նիրաւ մարդկանց առջին արդարացար , բայց ոչ
Աստուծոյ արդար և ահեղ գատառանին գի-
մաց : Այսափ ատեն ճանչցած , ընդունած և
հրապարակաւ քարոզած՝ Հայաստին Արքական
Համապատասխան միջանց ճշմարտութիւնը անիծեալ շահու-
մը համար ասպիճանիւն սրբութիւնը և խճիւն պարագառ-
բութիւններ՝ ոտքի տակ առած ուրացար , նզովե-
ցիր , հերքեցիր . բայց զայն ՚ի սրտէ կ' ընդունի
և կը գաւանի Քրիստոսի ընդհանուր կաթողի-
կէ և առաքելուկան Եկեղեցին : Դու մարդահա-
ճութեամբ ուսեալ՝ Հռոմեական Եկեղեցին մի
մայն ճշմարիս Քրիստոսի Եկեղեցի կոչեցիր , իսկ առա-
քեալը և ընդհանուր տիեզերական սուրբ ժո-
ղովը , և զանոնք գու մարող Աստուածարեալ
սուրբ Հաստատութեամբ վճռեցին զայն
մասն Եկեղեցի Քրիստոսի :

Ինքը ինք գմբախդ կը սեպես միայն Հռո-
մեական վարդապետութիւն խոպորելու , և անոր մոռնենի
բաժնութելու , սակայն այն մեծ դժբախտութիւնը
ամենաին չես յիշեր թէ՝ այսպիսի անարդ ըն-
թացքով մը բռն Քրիստոսի Տեառն մերոյ քա-
րոզած ճշմարիս փրկարար վարդապետութենէ բռ-
լորովին խոտորեցար , և անոր անտեսանելի միու-

Թենէ բաժնուեցար :

Վերջապէս դու և ես “Հաստատութեամք Առոշած ենք որ՝ իբրև Ճշմարիտ հաւատացեալ, ու Քրիստոսի Տեառն մերոյ ծառայք՝ այս կաթողիկէ ուղափառ հաւատքին մէջ ապրինք . . . և նոյնը մինչև վերջի շունջերնիս հաստատուն պահենք” . սակայն Ես | ուստուրական էմ, Ես Հըմամէական էմ ըսելով պիտի չի կարենանք մի միայն լոկ անուններով մեր փափագին հասնիլ, որ է յաւիտենական Երանութիւն, այլ մեր չար գործերը, և մեր անիրաւութիւնները մեղանողօրմ պիտի գատեն, վճռեն, և այնպէս գահսպիթաբար պիտի գլորեն ան սոսկալի անդունդը, որ է յաւիտենական գատապարտութիւն . . . :

Ուստի և գուք, ո՛վարդապետք Հռոմէական Եկեղեցւոյ, և աշոկերոք Բրօքականուայի, այն մարդկային նկատմաւնքները, անձնական փառամոլութիւնները մէկգի ձգած, ալ այսուհետեւ գաղրեցոցեք այնպիսի հինցած, փոտած կեղծ ասպուածաբանական վէճերը . որոնք ասօրուան օրս բոլոր արեհելեան և արեմտեան ուղափառ Եկեղեցիք հերքած են և կը հերքեն . . . :

“Թէ Հայք ասօրուան օրս Կերպուածող և Հեղեփիկու կ՞ն մ : — Թէ Հրաման իսյ անոնց Եկեղեցին երլալու : — Թէ Հրաման իսյ անոնց Կեպ հաղըրտակիցուին ընելու յասպուածային ” ըսող և գրով հարցնող՝ Վենետիկոյ Մխիթարեանք, շուտով գացեք Եւստրիոյ Տեառութեան Առջաւայ քաղոքը Հայոց Առորբ Խաչ Եկեղեցին, և հոն Եւստրիացւոց Երբեպիսկոպոսին, և Հռոմէացեալ Հայ քահանայից հետ

միասին շուրջառ առած՝ գերապատիւ Տ. Արդիս օրբազան Հայ Արքեպիսկոպոսին մատուցած Առւրբ անմահ պատարագին սպասաւորութիւն ընող Հռոմէացեալ Հայ քահանայից ընկերակից եղէք, որով խղճերնիդ հանդարտի . . . :

“ Եւս սբիցն Պետրոսի Կառակելալեալի , Հիմ Եկեղեց- յոյ , աղբիւր իրաւաբան-թեան , կերպն մութեան ” առնու անեալ գիւքը հրատարակող , և ’ներքոյ համազալավ Վէննայի Վիթիթարեանք , դուք ալ աճապարեցէք երթալու նոյն քաղքին Ես ստրիացւոց Եկեղեցին , և հոն տեղ դասին աջ կողմը նստող յիշեալ Հայ Արքազան Հօր աթոռին քով հանդարտ սրտով նստեցէք :

Եւ ՚ի պատիւ Արքազանին՝ ան օրուան Հայ արարողութեամբ կատարուած Ա. պատարագին ներկայ գտնուեցէք , որով լսէք Հռոմէացեալ Հայ պատարագիւ քահանային ատենաբանութիւնը ՚ի վերայ գալստեան Արքազան Հօր :

Տեսէք սուր աչքովիսիդ յիշեալ քահանային զգեստաւորեալ Արքազան Հօր առ ջին գալը , և անոր խոստովանութեան և մշայից ձայները , ու քովը կեցող սրբազանին աշակերտը Տ. Վեսրովք վարդապետին Ալբետոյի ըսելով՝ արձակման ձայնը լսեցէք . լսեցէք Եւ դուք , և Հռոմէացեալ համազգի եղբարք , եկէք դուք ալ նոյն Եկեղեցին , ոբն որ ձեր ուսուցիչները և ձեր վարդապետները հօնտեղ ներկայ են , որպէս զի սրբազան Հօր օրհնութեանը մասնակից ըլլոք , որ ահա Հայ դպիրները շապիկնին հագուած շարականներով , թաքօրով՝ Եկեղեցւոյն աջ կող-

մի խորանէն՝ ՚ի ձայն բարձր պահպանից կ' օրհնեն
Երեք Շղգաց միահամուռ քահանայքը և անսնց
ժողովուրդը

Եւ արդ ահաւասիկ ստուգիւ Վիտանական Հաւ-
տափյ Հաւտափից, և անոր սկզբունքները։ Ուս-
տի թող Պոլսոյ մէջ Գ. Հասունն և Հասու-
նեանը՝ գրով հրատարակուածը արգիլեն, անի-
ծեն, նզովին, իսկ քիչ մը հեռուն, և կարծես
թէ մի և նոյն վարկեանի մէջ Վւստրիոյ երկիր-
ներուն վրայէն գործով կը փայլի և կը ցոլանայ,
և այնպէս նոյն տեղը իրաւամբ կը կոչուի Շ. Ղ-
բիւր իրաւաբանութեան, կեգրոն միուն

Թող Տ. Ներսէս Վիտանական Հաւատոյ ան-
հերքելի ստուգութիւնը, և անոր հետ միաւոր-
եալ Վստուածային սիրոյ գօրութիւնները՝ ՚ի
խղճէ ստիպեալ գրելէն և հրատարակելէն ժո-
քը, հիմա յանկարծ ելէ մարդահաճութեամբ
զանոնք բոլորովին ուրանայ, Խղաներով յետո կո-
չէ, հերքելով մերժէ, ահա անդին երկու կամ
երեք տղգաց Վիտանական Հաւատոյն և լրման
սիրոյն որստման ձայները մինչեւ երկինք աթոռ։
Վստու ծոյ՝ կը բարձրանայ։

Թող այսուհետեւ անսխալ Հոռմը, Բրոբակա-
տան և նորելու կ ասպուածաբանները՝ որչափ որ կ' ու-
զեն՝ պուան, կանչուըրտեն թէ՝ “Արտաքոյ Եւ-
կեղեցւ ոյն Հոռմայ չիք փրկութիւն”։ ահա աս
կեղծ գրութիւնը նոյն իսկ Վւստրիոյ, Գաղիոյ,
Սարտենիոյ, Մպանիոյ, և ընդհանուր Կտուլիոյ՝
Հոռմէական Տէրութիւնները (հանդերձ Եկեւ-
ղեցականօք և աշխարհականօք) բանիւ և ար-

գեամբ կը հերքեն և կը մերժեն :

Թող հիմա աղէկ մը խորհին և մտածեն ան
“Հայոց Ակեղեցին Տոլլետալ է, Աերեպիկոս է, Ավա-
յուածող է ըսող և տպագրութեամբ հրատարա-
կող, և ամպիոններու վրայէն քարոզող խաթեթանե-
րը . և նոյն Եկեղեցիէն ներս մանելը աներելի
մեղքերէն ծանր յանցանք սեպելով՝ զայն գոր-
ծող խոստովանորդիները Հռոգեորապէս կապեն,
Ձերապահեալ(1) ընեն, և անոր թողութիւնը Ե-
պիսկոպոսական իշխանութեան սեփականեն . ա-
հա անդին Վեստրիոյ Հռոմէական Արքեպիսկո-
պոսը իւր քահանաներովը, Արքաւագներովը,
ժողովուրդովը՝ հանդերձ Հռոմէացեալ Հայ Ե-
կեղեցականօք և Աշխարհականօք՝ խուռն բազ-
մութեամբ Հայոց Սուրբ Եկեղեցիէն ներս ցըն-
ծումով և ուրախութեամբ կը մտնեն, և հոն
ըստ ծիսից և դաւանութեանց Հայոց՝ հանդի-
սիւ կատարուած Աստուածային բոլոր սուրբ
պաշտամունքներու՝ մինչեւ աւարտմանը ներկայ
կ'ըլլան


ԶԵԼ նոյն հանդէսները, նոյն բազմութեամբ և
նոյն քաղաքը՝ փոխադարձաբար Հռոմէական
սուրբ Եկեղեցւոյ մէջ կը կատարուին

Վերջապէս, ո՛վ մարդիկը աստուծոյ, ահա

(1) Ինչպէս որ կերեկ այս Ներառահեալ բառը՝ լատինացիք հնարած
են քանի մը ծանր մեղքերու համար (ինչպէս մէկն է Հայոց Եկեղե-
ցիէն ներս մանելը) (ո անընը հայհոյանք), որով յանցաւորը կը
պարտաւորի անոր թօղութիւնը տեղւոյս առաջնորդ Եպիսկոպոսէն
ընդունելու, իւր վրայ սահմանուած Հռոգեոր պատիմները կրելով .
Ուրիշ անդամ այս բառին վրայօք գեռ ևս պացատրութիւններ պիտի
տրուին :

զասոնք յայտնի լսելով, տեսնելով՝ ՚ի սէր (սոտուծոյ և ճշմարտութեան՝ թողէք այսուհետեւ այնպիսի վատ բաժանմունքները, հոգեկորոյսերկառաւակութիւնները, գայթակղելի վիճաբանութիւնները, քանի որ առ ներկայ ժամանակը և պարագաները ձեզմէ կը պահանջէ, ըստ այնմ “ Մինչդեռ ժամանակս ՚ի ձեռս է գործեսջիք զբարիս ” . չէնէ ժամանակը եկաւ հասաւ որ քարերն անգամ աղաղակեն :

Աղէ ուրեմն շնորհօքն Հոգեցոյն սրբոյ զօրացէք, քաջալերուեցէք, ո՛լ բաժանեալ և ցրուեալ հօտ Քրիստոսի, և այն ոքանչելի սիրովն Ծստուծոյ վառեալ՝ միացէք Հայք ընդ Հայս, Յոյնք ընդ Յոյնս, լատինք ընդ լատինացիս . և երեքեանքդ միահամուռ եղած՝ (առանց մէկ մարդկային նկատման) հազարաւոր տարիներէ ՚ի վեր ուղափառութիւնը տապալող, և զայն ՚ի հիմանց քանդելու ջանացող, բայց չնչին արմատացած տարածայնութիւնները մէջ տեղէն խլելով, անոր տեղ մէջերնիդ քրիստոնէ ավայել խաղաղութիւն, Եղայրօիրութիւն, Խոնարհութիւն, Հաւասարութիւն հաստատեցէք, որով ան ատեն Քրիստոսական Խկեղեցին ճշմարտապէս և ստուգապէս միացեալ՝ այն ճշմարիտ և Քաջ Հովուապետին խօսքը կատարուի, որ ըստ այնմ կըսէ . “ Եւ ձայնի իմում լուիցեն և եղիցին մի հօլիւ ” :



4258

4123